

Ռ. Ա. Իսխանյան

ԲԱՅԻ ՍԵՌԻ ԿԱՐԳԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արդի հայերենի (արևելահայ) բայի սերի մասին արտահայտված տեսակետները շատ տարբեր են ու հակասական. տարբեր են ընդունվող սեռերի քանակը, նրանց տրվող անվանումներն ու բնորոշումները, բայի սերի բուն ըմբռնումը: Քերականների զգալի մասը ընդունում է հայերենի բայի համար երեք սեռերի (ներգործական, չեղոր, կրավորական) տեսությունը մաքուր վիճակում (Ս. Պալասանյան, Գր. Վանցյան, Գ. Սևակ և ուրիշն.): Շատերը այդ տեսության հիմունքն ընդունելով՝ երեք սեռերին ավելացնում են անդրադարձ, երբեմն էլ փոխադարձ սեռեր (Հ. Դադբաշյան, Ա. Ղարիբյան և ուրիշն.): Մ. Աբեղյանի մոտ գտնում ենք հայերենի բայի սերի յուրովի ըմբռնում. երեք սեռերի տեսությանն այստեղ տրված է նոր տեսք շնորհիվ բայի սերի բառային (լեքսիկական) տեսակետի, ըստ որի հայերենում ներգործական և կրավորական ինքնուրույն բայեր (բառեր) են: Ոմանք էլ հայերենում կրավորական սեռ չեն ընդունել (Գ. Ներսիսյան, Ռ. Զոհրաբյան), իսկ Ա. Բահաթրյանը հայերենի բայի համար ընդունել է միայն ներգործական և կրավորական սեռեր, թեև իր տեսակետը չի հիմնավորել: Լուրջ տարբերություններ կան նաև հայերենի բայի սերի հարցում նման տեսակետներ հայտնաբերող լեզվաբանների, ինչպես և միևնույն լեզվաբանի հայտնած կարծիքների միջև: Բոլոր տեսակետների քննությունը ցույց է տալիս, որ մի կողմից եղել է ձգտում ճիշտ նկարագրել արդի հայերենի տվյալ երևույթը, մյուս կողմից լեզվաբաններին կաշկանդել է բայի երեք սեռերի ավանդական տեսությունը, որն ըստ էության հին հունարենի բայի համար ալեքսանդրյան քերականների տված տեսության մի տարբերակն է: Սյդ տեսությունն ասում է. երեք տեսակ գործողություն է լինում՝ ներգործող, կրող և միաժամանակ կրող ու ներգործող (կամ՝ ոչ կրող ոչ ներգործող), ըստ այդմ էլ բայերը լինում են ներգործող, կրող և միջին (կամ՝ չեղոր), հունարեն՝ ἐνεργητικόν, παθητικόν, οὐδέτερον (μέσον): Հույն քերականները այս սխալ տեմի երեք խմբերի համար առանձին բայերի սեռը որոշել են հին հունարենի բայի գլխավորապես բառակազմական (վերջածանցներ), նվազ չափով իմաստային և շատ քիչ քերականական յուրահատկություններով: Այս սխալ տեմի ժամանակին զրարարի, ինչպես և այլ լեզուների քերականներ տարբեր փոփոխություններով ընդօրինակեցին: Գրաբարի քերականության զրբերից այն անցավ աշխարհաբարին նվիրված առաջին զրբերի մեջ (Ա. Այտընյան, Ս. Պալասանյան)², մոռացվեց նրա օտարամուտ էությունը, սկսեց լրջորեն խանգարել աշխարհաբարի բայի մի շարք առանձնահատկությունների օրյեկտիվ նկարագրմանը: Այժմ էլ այդ տեսությունը իշխում է հայերենի դասագրքերում, և պա-

¹ Ժ. Վանցյանի և Լեզու, Մոսկվա, 1937 (ռուսերեն), էջ 102—107:

² Ս. Պալասանյանը այդ սխալման ընդօրինակելով այնտեղից հանեց միայն նասարակ սեռը, որից սխալման էությունը մնաց նույնը:

սահական չէ, որ հայերենի բայի սեռի վերաբերյալ որսկես օրենք մշտնջապատ, շփոթ պատկերացում է լինում աշակերտների, ուսուցիչների և ուսանողների մոտ:

1 Արդի հայերենի բայի սեռի կարգը ներկայիս գասագրերում և քերականագիտական գրականության մեջ ներկայացվում է հետևյալ կերպ: Բոլոր բայերը բաժանվում են երեք խմբի (ումանց մոտ շորս), գրանք են.

Ա խումբ.— Ներգործական բայեր, որոնք ցույց են տալիս «ուրիշ առարկայի վրա անցնող գործողություն, որ իր վրա կրում է այդ առարկան»³ կամ՝ «այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է անմիջական առարկա»⁴:

Բ խումբ.— Չեզոք բայեր, որոնք ցույց են տալիս «անառարկա գործողություն» կամ՝ «այնպիսի գործողություն, որպիսին կատարվում է առանց ներգործելու և առանց ուրիշի գործողությունը կրելու»⁵:

Գ խումբ.— Կրավորական սեռի բայեր, որոնք «ցույց են տալիս, որ ենթական իր վրա է կրում մի ուրիշի գործողություն»⁷ կամ՝ «այնպիսի գործողություն, որպիսին գործողություն կատարողը կրում է մի ուրիշ առարկայից»⁸:

Երբ փորձում ենք հայերենի լեզվական համապատասխան փաստերը առանց կանխակալ տեսակետների ճշտորեն ըմբռնել և դասակարգել ըստ այս սխեմների հայտ է դալիս նրա խիստ հակասական բնույթը և պարզվում է. ա) Բայերի այդ խմբերին տրվող իմաստաբանական բնորոշումները չեն համապատասխանում լեզվական այն հատկանիշներին, որոնց համաձայն իրականում առանձնացվում են այդ խմբերը: Բ) Բայերի այս խմբերին տրվող ոչ ճիշտ բնորոշումների տակ բայի սեռի այս սխեմում թաքնված են արհեստականորեն իրար միացված քերականական երկու տարբեր կարգեր: Գ) Այս սխեմում իրականում առկա է բայերի ոչ թե երեք, այլ երկու խումբ. կրավորական սեռի բայերը ինքնուրույն բայեր (բառեր) չեն:

Որ բայախմբերին տրվող բնորոշումները ճիշտ չեն հեշտությամբ ապացուցվում է օրինակների միջոցով: Վերցնենք Ա բայախմբի (ներգործական) մեջ զրվող մի շարք բայեր՝ զգալ, տեսնել, լսել, ունկնդրել, հավանել, նիշել, մոռանալ, զիտնալ, երագել, սիրել, ցանկանալ, ուզել և այլն: Ըստ վերոհիշյալ բնորոշումների այս բայերի ցույց տված գործողությունը պետք է անցնի, ներգործի ուրիշ առարկայի վրա և առարկան պետք է կրի այդ գործողությունը: Իրականում այս բայերը անհատի (սուբյեկտի) ներսում կատարվող գործողություններ (երբեմն էլ գրություններ) են ցույց տալիս և ոչ մի պարագայում, ոչ մի ձևով որևէ առարկայի վրա չեն անցնում, չեն ներգործում և չեն էլ կարող անցնել: Օրինակ, կա՞րդյոք գործողություն առարկայի վրա անցնելու որևէ հետադուր նշան հետևյալ պեպքերում. «Լի մրահոն աղջիկ տեսա Ռիալտոյի կամուրջին» (Իս)⁹, «Ետևից մի խուլ տնօր լսեցի» (Ի), «Կզգամ Բայր բո ժանոթ»:

³ Ա. Ղաբիրյան, Հայոց լեզվի դասագիրք, Եր., 1958, էջ 251:

⁴ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 287:

⁵ Ա. Ղաբիրյան, ն. տ., էջ 252:

⁶ Գ. Սևակ, ն. տ., էջ 289:

⁷ Ա. Ղաբիրյան, ն. տ., էջ 253:

⁸ Գ. Սևակ, ն. տ., էջ 288:

⁹ Հոգնածում օգտագործված կրճատումներ. Իս — Ավ. Խաչակյան, Ի—Հ. Խոսեանյան, Տ—Վ. Տերյան, Բ—Ա. Բակունց. Չ—Ե. Չարենց, ՍՀ—Արմենական Հայաստան, ԻԹ—Գրական թերթ, Եր—Երևան, Թարգմ.— Թարգմանական գրականություն:

«Մոռացել եմ անցյալում տրտունջ, բախի՞մ ու խավար» (Տ), «Երագում եմ գալի՞ն անծիր», «Ես հիշել եմ այն ամառվա քո ժպիտը տխուր, անթև» (Չ) և այլն: Մի՞թե պարզ չէ, որ աղջիկ տեսնելիս այդ տեսնելը լինավ էլ չի անցնում աղջկա վրա և ոչ մի դեպքում էլ չի կարող անցնել (դեռ ընդհակառակը, աղջկա պատկերը պետք է անցնի տեսնողի աչքի մեջ), ինչպես և լսելը չի կարող անցնել տնօրենի կամ որևէ այլ ձայնի վրա (ձայնը պետք է անցնի լսողի ականջը): Կամ մի՞թե, երբ անհատը մոռանում է տրտունջը, վերջինս իր վրա է կրում այդ մոռանալը, մի՞թե ժպիտը հիշելիս հիշելն անցնում է ժպտի վրա, ժպտն էլ կրում է այդ հիշելը, իսկ քայլը զգալիս՝ քայլն է կրում զգալը: Եվ կամ մի՞թե ն. Չարենցի հայտնի բանաստեղծության մեջ հեղինակը սիրելով Հայաստանի բարը, աղջիկների պարը, վարդերի բույսը և այլն ներգործում է այդ ամենի վրա: Պարզ է, որ բոլոր այս դեպքերում առարկայի վրա գործողություն անցնելու, գործողությունը կրելու մասին խոսք չինել չի կարող: Նույնը կարելի է ասել նաև և՛ խմբի բաղաձայնի վրա կարգի բայերի մասին, ինչպես՝ երգել, կարգալ, ասել, արտասանել, սպասել, բողոքել, գովել, կանչել, ֆենարկել, դիմավորել, ընդունել, հանդիպել, որոնել և այլն: «Ինձ ևս որոնում աղոտ աշխարհում», «Ընդունում ես սիրով կյանք ու մահ», «Թողի երկիրն իմ հայրենի» (Տ), «Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով նոր խոսքով» (Թ), «Ես երգում եմ կյանքս հիմա արևով, արյունով, ոսկով» (Չ) և այլն: Մի՞թե անհեթեթություն չէ պնդել, թե այս դեպքերում որոնելն անցնում է «ինձ»-ի վրա, ընդունելը՝ մահվան, երկիր թողնելը՝ երկրի, երգելը՝ կյանքի վրա և այլն: Եվ դարմանալի է, թե հանուն ինչի՞ երևիսաներին դպրոցներում պետք է ստիպել, որ նրանք սերտեն, թե այդ բայերի գործողությունն անցնում կամ ներգործում է առարկայի վրա, երբ երևիսան իր փորձից դիտի, որ նման բան չի կատարվում: Փաստորեն երևիսան սովորելով հայերենի քերականությունը սկսում է չգիտակցել, որ խոսքը սոսկ իր իմացած մայրենի լեզվի մասին է:

Այսպիսով բայի սեռի վերոհիշյալ սիստեմում և՛ բայախմբին տրվող բնորոշումը չի համապատասխանում այդ խմբում դրվող բաղաձայնի բայերի բնույթին, ուստի և սխալ է: Անշուշտ և՛ խմբի բայերի մի մասն էլ իրոք ցույց է տալիս առարկայի վրա անցնող գործողություն (ջարդել, ուտել, ներկել և այլն), բայց սխալ է մի շարք բայերի հատկությունը վերագրել մի այլ շարք բայերի, երբ վերջիններս այդ հատկությունից զուրկ են:

Եւ խմբի բայերի համար ասվում է նաև, որ նրանց ցույց տված գործողության կատարման համար պահանջվում է անմիջական առարկա: Սա, անշուշտ, ճիշտ է, բայց այդպիսի բնորոշումը հավասարապես վերաբերում է նաև Բ խմբում (չեղոք) դրվող բաղաձայնի բայերի, որոնց ցույց տված գործողության համար իրականում նույնպես անմիջական առարկա է պահանջվում, իսկ ըստ բայի երեք սեռերի սիստեմի բնորոշման «որեւէ առարկա, օբյեկտ չի պահանջվում»՝ «Վերցնենք, օրինակ՝ Բ խմբի մի քանի բայեր. նպաստել, դիմել, հետևել, հասնել, ծանոթանալ, ամուսնանալ, սիրահարվել, հարձակվել, միանալ, ձգտել, արժանանալ, հիանալ, օգնել, ներգործել, ազդել, միջամտել, մասնակցել և այլն: Մի՞թե պարզ չէ, որ այս բայերից յուրաքանչյուրի ցույց տված գործողության կատարման համար նույնպես անհրաժեշտ է առարկա, ինչպես տեսնել, կարգալ, սիրել, խփել և և՛ խմբի մյուս բայերի համար: Ոչ մի հիմք չկա այս բայերն «անառարկա» անվանելու: Ղեռ ավելին, այս բայերից մի քանիսի ցույց տված

գործողություններ անցնում է առարկայի վրա (ինչպես՝ ազդել, ներգործել, օգնել միջամտել, հաճախել և այլն)։

Ինչ վերաբերում է «անմիջական» հասկացողություններ, ապա այն ոչինչ որոշակի չի ասում, օրինակ, ոչ մի կերպ չի կարելի տարբերել թե Ա և Բ խմբերի հետևյալ բայերից, որի տոարկան է անմիջական, որին՝ ոչ անմիջական. հիշել մի բան և մասնակցել մի բանի, մոռանալ մեկին և ազդել մեկի վրա, սիրել մեկին և սիրահարվել մեկին, սպասել մեկին և հաճախել մեկի վրա և այլն (ընդգծված են Բ խմբի բայերը)։ Հասկանալի է, որ ոչ ոք այս բայերը իրարից ջուկել չի կարող առարկայի անմիջականության աստիճանը որոշելու միջոցով։

Հայերենում բայերի առարկա պահանջող կամ չպահանջող, առարկայի վրա անցնող կամ չանցնող, ներգործող կամ չներգործող գործողություններ ցույց տալու իմաստաբանական իրողություններ լեզվական (ֆերականական, բառակազմական) ձևավորում չունեն։ Վերոհիշյալ Ա և Բ բայախմբերը հայերենի քերականության մեջ իրականում առանձնացվում են նրանց քերականական հատկանիշների համաձայն, այն է՝ առարկայի կամ խնդրի հայցական հոլով (ուղիղ խնդիր) առնելու կամ այդպիսին չառնելու հատկանիշներով։ Անկախ հիշյալ իմաստաբանական բնորոշումներից, իրականում Ա խմբում է գրվում յուրաքանչյուր բայ, որն ընդունակ է առարկայի հայցական հոլով առնելու, իսկ Բ խմբում գրվում են այդպիսին չառնող բայերը, և ոչ ոք այս երկու կարգի բայերն իրարից ջուկելիս միտքը չի ծանրաբեռնում առարկա պահանջող կամ չպահանջող, ներգործող կամ չներգործող և այլ տեսակի գործողություններն իրարից տարբերելու անօգուտ և աննպատակ աշխատանքով։ Արդի հայերենում առարկայի հայցական հոլով (ուղ. խնդիր) առնելու ֆերականական հատկանիշը չի նույնանում գործողության առարկա պահանջելու, առարկայի վրա անցնելու բայական բնույթի հետ, ինչպես և հայցական չառնելու բայական հատկանիշը չի նույնանում գործողության առարկա չպահանջող (ներակայական) բայական բնույթի հետ։

Բայի երեք սեռերի սիստեմում Գ բայախմբին (կրավորական) տրվող բնորոշումը ունի երկու կողմ՝ ա) որ սրանց ցույց տված գործողություններ կատարում է ոչ թե քերականական էնթական (որը տրամաբանական առարկան է), այլ խնդիրը (որը տրամաբանական էնթական է), բ) որ քերականական խնդիրը ներգործում, իսկ էնթական իր վրա կրում է այդ գործողությունը։ Բնորոշման առաջին դադափարը անառարկելի է, քանի որ իրոք տվյալ դեպքում մենք գործ ունենք լուրջ միևնույն գործողության ուղղության շրջման հետ. իրական առարկան դառնում է քերականական էնթական։ Դա կատարվում է Ա խմբի բայերին վ՝ մասնիկ ավելացնելու և համապատասխան կապակցության մեջ բայը գործածելու շնորհիվ։ Սակայն բնորոշման երկրորդ դադափարը դարձյալ անընդունելի է վերը բերված պատճառներով։ Այսինքն՝ եթե Ա խմբի բայերի մի դասի մասը ցույց չի տալիս առարկայի վրա անցնող, ներգործող գործողություն, ապա այդ բայերը նման գործողություն ցույց չեն տա նաև այն դեպքում, երբ այդ գործողություններն սոսկ ուղղությունը փոխվի. եթե՝ «Մոռացել ենք անցյալում տրտունջ, թախիծ ու խաղաղ» և «Թողի երկիրն իմ հայրենի» նախադասությունների մեջ խնդիրները չեն կրում մոռանալ կամ բողբոջող գործողությունները, ապա «Տրտունջ, թախիծ ու խաղաղ մոռացվել են (մեր կողմից) անցյալում» և «Հայրենի երկիրը թողնվեց իմ կողմից» նախադասությունների մեջ նույնպես էնթական դարձած խնդիրները այդ գործողություններ կրել չեն կա-

յող: Հետևաբար, այս ր խմբի ճիշտ բնորոշումը կլինի միայն այն, որ այդ բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարողը ոչ քեմբհակաանական ենթական է, այլ խնդիրը:

Այժմ տեսենք, թե ինչ սլատկեր է ստանում բայի երեք սեռերի սիստեմը, երբ նրա վրայից վերցնում ենք առարկա պահանջելու, չպահանջելու, առարկայի վրա անցնելու կամ չանցնելու, գործողությունը կրելու, չկրելու մասին եղած բնորոշումների քողը:

Ա բայախումբ (առարկայի հայցական հոլով առնող).— լսել, սիրել, գրել, շինել, հաղթել, կարդալ և այլն:

Բ բայախումբ (առարկայի հայցական չառնող).— գնալ, գալ, բնկնել, նստալ, միջամտել, հասնել և այլն:

Գ բայախումբ (կրավորական սեռի).— լսվել, սիրվել, գրվել, շինվել, հաղթվել, կարդացվել և այլն:

Այստեղից երևում է, որ Ա (ներգործական) և Բ (չեզոք) խմբերից յուրաքանչյուրում գրված են կաղմությամբ ու իմաստով իրարից տարբեր բայեր՝ բառեր (լսել և գնալ, սիրել և գալ, գրել և բնկնել և այլն), մինչդեռ Ա (ներգործական) և Բ (կրավորական) խմբերում գրված միավորների իմաստի մեջ ոչ մի տարբերություն չկա (լսել ու լսվել միևնույն լսելու գործողությունն է կամ սիրել ու սիրվել, գրել ու գրվել միևնույն սիրելու և գրելու գործողություններն են ցույց տալիս և այլն), այսինքն՝ Ա խմբի բայերը Գ խմբում ստացել են վ մասնիկ և կապակցությունների մեջ կարող են ունենալ այնպիսի ենթակա, որը գործողություն կատարողը չէ: Այսպիսով բայի սեռի այս սիստեմում Ա և Բ բայախմբերի առանձնացման հիմունքը տարբեր է ր խմբում գրվածների առանձնացման հիմունքից. նախ հայերենի բոլոր բայերը բաժանված են երկու խմբի ըստ առարկայի հայցական առնելու կամ չառնելու հատկանիշի և սպա ստացված երկու բայախմբի կողքին որպես նրանց հավասարազոր բայեր գրված են հայցական առնող բայերի վ մասնիկ ստացած (և կապակցություններում ենթակայի կողմից չկատարվող գործողություն ցույց տվող) ձևերը: Առաջին դեպքում քերականական կարգի որոշման հիմունքն ընդունվում է բայերի հոլովառությունը (խնդրառությունը), երկրորդ դեպքում արդեն դասակարգված բայերի մի մասի նոր ձևավորումը (վ մասնիկ) և շանող ենթակա ունենալու շարահյուսական հատկանիշը: Այսինքն՝ գործ ունենք դասակարգման երկու հիմունքի հետ, քերականական երկու կարգի հետ, որոնք արհեստականորեն մի կարգի մեջ են միացվել սխալ բնորոշումների քողի տակ: Այս կարգերից միայն մեկն է հանդիսանում բայի քերականական սեռի արտահայտություն, դա այն է, որ բայերը ձևավորման միջոցով մերք առնող, մերք չառնող ենթակա են ստանում:

2. Ըստ առարկայի հայցական առնելու կամ չառնելու հատկանիշի բաժանվող բայերի երկու խմբերին լեզվարանության մեջ ընդունված է կոչել անցողական և անանցողական (transitive և intransitive) բայեր: Հաճախ լեզվաբանները բայերի այս խմբերը հիշյալ անուններով կոչելուց հետո վերապահություն են անում, թե անցողական ու անանցողական միանգամայն պայմանական անուններ են և չեն արտահայտում գրանցից յուրաքանչյուրի տակ ենթադրվող բոլոր բայերի էությունը: Նույն վերապահությամբ այդ անունները կարելի է օգտագործել նաև հայերենի բայերի համար, քանի որ հայերենում նույնպես առարկայի հայցական առնելու բայական հատկանիշը և գործողու-

թյան անցողական բնույթը չեն նույնանում: Հայերենում անցողական պայմանական անունը պետք է տալ առարկայի հայցական առնող բոլոր բայերին, իսկ անանցողական՝ մնացած բոլոր բայերին, որոնք հիշյալ նույնականության գուրկ են¹⁰:

Բայերի այս բաժանումը կատարվում է քերականական հիմունքով (հոլովառություն) ուստի և դա քերականական կարգ է, սակայն խմբերից յուրաքանչյուրի հոլովառական առանձնահատկությունների հետևում թաքնված են զուտ բառագիտական առանձնահատկություններ: Ուրիշ ինչով բացատրել այն, որ մի շարք առարկա պահանջող բայեր առարկայի հայցական առումն են, իսկ նույն կարգի մի շարք այլ բայեր նման հոլովառությունից զուրկ են: Բացատրությունը պետք է փնտրել միայն բայերի բառագիտական (իմաստ, կազմություն, պատմություն) առանձնահատկությունների մեջ: Ոսկայն հայերենի քերականության մեջ անուշադրության են մատնված առարկայի հայցական առնելու կամ շահնելու և բայերի անցողական կամ անանցողական համարվելու հարցում բառակազմական և պատմական գործոնները: Իրականում յուրաքանչյուր բայի զուտ բառակազմական առանձնահատկությունը (ինչպես և կիրառման սխեմությունը) շատ բանով է պայմանավորում նրա հոլովառությունը: Միայն այդպիսի առանձնահատկություններով կարելի է բացատրել այն, որ տարբեր լեզուներում միևնույն իմաստն ունեցող բայերը տարբեր հոլովառություն ունեն. մի դեպքում առարկայի հայցական առումն են (անցողական), մյուսում՝ ոչ (անանցողական): Համեմատենք հայերենի, ռուսերենի և գերմաներենի մի քանի նույնանիշ բայեր. ամուսնանալ (անանց.) — жениться (անանց.) — heiraten (անց.), կառավարել (անց.) — управлять (անանց.) — regieren (անց.), դավաճանել (անց.) — изменять (անանց.) — verraten (անց.), հիանալ (անանց.) — восхищаться (անանց.) — bewundern (անց.), երազել (անց.) — мечтать (անանց.) — träumen (անանց.), ձեռք տալ (անանց.) — трогать (անց.) — berühren (անց.), կասկածել (անանց.) — сомневаться (անանց.) — bezweifeln (անց.), խուսափել (անանց.) — избегать (անանց.) — umgehen (անց.), սպասել (անց.) — ждать (անանց.) — warten (անանց.): Այսպիսի բայերի շարքը կարելի է շատ երկարացնել: Նույն կարգի տարբերություններ կարելի է գտնել նաև հայերենի և այլ լեզուների միջև, օրինակ, հայերեն օգնել, հետևել, մոտենալ անանցողական բայերին անգլերենում համապատասխանում են to help, to watch և to approach նույն իմաստով անցողական բայերը, իսկ լսել և սպասել անցողական բայերին՝ to listen և to wait նույն իմաստով անանցողական բայերը և այլն: Միևնույն լեզվում նույնպես տարբեր կառուցվածքի, բայց նույն (կամ շատ մոտ) իմաստ արտահայտող բայերից մեկը առարկայի հայցական առումն է. մյուսը՝ ոչ: Հայերենում այդ բանը լավ է դիտվում մի շարք սովորական (ոչ շարադիր) և հարադիր բայերի համեմատության դեպքում: Այսպես օրինակ՝ լսել (անց.) և ականջ դնել (անանց.), կանչել (անց.) և ձայն տալ (անանց.), սկզբնավորել (անց.) և սկիզբ դնել (անանց.), պղծաբանել (անց.) և հարու տալ (ան-

¹⁰ Պրոֆ. Ռ. Ղափանյանի «Հայոց լեզվի դասադրի» վերջին հրատարակություններում խոսվում է անցողական և անանցողական բայերի մասին, բայց որում «անցողական» և «աներգործական» հասկացությունները լիովին նույնացվում են, իսկ անանցողական բայերը բնորոշվում են ճիշտ չեզոք անվանիվոգ բայերի պես, թեև անանցողականների մեջ են դրվում նաև կրավորական սեռի բայերը էջ 254: Անհասկանալի է մնում այսպիսի մեկնաբանությամբ բայերի այս երկու խմբերի առանձնացման իմաստը:

անց.) և այլն: Այստեղ պարզ է, որ նույն իմաստն արտահայտող բայերի մի խմբի առարկայի հայցական (ուղիղ խնդիր) առնելը, մյուսի շառնելը պայմանավորված է բայերի տարբեր կառուցվածքով. հարադիրները նախապես կապմվել են ստորոգյալի և ուղիղ խնդրի կապակցություններից, վերջինս թեև դարձել է հարադիր. բառի բաղադրիչը, բայց պահպանում է նաև իր շարահյուսական դերը՝ թույլ շտալով բային վերցնել նոր ուղիղ խնդիր: Հնարավոր է գտնել նաև բառակազմական շատ ուրիշ օրինակափոխություններ, որոնք համապատասխան չափով պայմանավորվում են առարկայի հայցական հոլով առնելու կամ շառնելու բայական հատկությունները հայերենում: Նույնիսկ միևնույն անանցողական բայը ժամանակի ընթացքում կարող է իմաստը պահպանելով հոլովառությունը փոխել և դառնալ անցողական և հակառակը: Օրինակ, հայերենում ձեռնարկել բայը անանցողական էր, առարկայի հայցական հոլով չէր առնում, քանի որ մտովին ստուգարանվում էր (ձեռք գցել) և միայն առարկայի տրական հոլով էր առնում (ձեռնարկել գործին): Հետագայում այդ բայի բաղադրիչ մասերը սկսեցին առանձին չմոտենալ և ներկայումս բայը դարձել է անցողական¹¹, Օրինակ. «Նոր Բայազետի քաղաքային Սովետը և նրա գործկոմը բոլոր միջոցները կձեռնարկեն կարճ ժամկետում այս թերությունները վերացնելու համար» (ՍՀ, 9. 10. 58): «Եգիպտոսի իշխանությունները եռանդուն միջոցներ են ձեռնարկում Պորտ-Սայդի բնակչությանը պարենով ապահովելու համար» (ՍՀ, 27. 12. 57): Այս բայն ունի իր կրավորական սեռը. «Մեծանուն գրողի ծննդյան 200-ամյակի կապակցությամբ ձեռնարկվել է նրա երկերի տասնատորյակի հրատարակությունը» (ՍՀ, 9. 10. 58):

Այսպիսով առարկայի հայցական հոլով առնելու կամ շառնելու բայական հատկանիշը պայմանավորվում է յուրաքանչյուր առանձին բայի բառագրության (իմաստ, բառակազմություն) առանձնահատկություններով, ուստի և այդ հատկանիշը պետք է տրվի բառարաններում, ինչպես և սովորաբար արվում է:

3. Եթե անցողական և անանցողական բայերի տարբերումը կատարվում է միայն յուրաքանչյուր բայի առարկայի հայցական առնելու կամ շառնելու դուտ քերականական ընդունակությամբ, ուրեմն այստեղ շատ կարևոր է այդ հայցականի որոշման հարցը:

Հայերենում հայցական հոլովն ունի երկու գլխավոր ճյուղավորում. առաջինը՝ առարկայի հայցականն է կամ ուղիղ խնդրի հայցականը, երկրորդը՝ հայցականի մյուս բոլոր դեպքերն են (տարբեր պարագաներ, կապի խնդիր, ստորոգելիական վերադիր և այլն): Այս երկու հայցականներն իրարից լրջորեն տարբերվում են իրենց ձևավորմամբ: Երկրորդ հայցականը ամեն դեպքում բառի ուղիղ ձևն է (կամ որոշող հոլով) և միշտ ձևով նույնանում է ուղղական հոլովի հետ: Ընդհանուր առաջին հայցականն ունի իր ձևավորման ուրույնությունը. միևնույն խնդիրը կարող է ունենալ և՛ ուղղականի ձև, և՛ տրականի (իրի առում, անձի առում): Հայերենի հայցականի այս առանձնահատկությունը

¹¹ Այս երևույթից պետք է տարբերել այն դեպքերը, երբ որևէ բայ գործածվում է երկու տարբեր իմաստով և ըստ այդմ էլ մերթ առարկայի հայցական առնում է. մերթ՝ ոչ, ինչպես. «Բնիկներն ապրում են անտանելի պայմաններում» և «Քրանսիական էկոնոմիկան լուրջ դժվարություններ է ապրում» (ՍՀ, 28. 12. 56): Այս երևույթին երեք սեռերի տեսությունն ընդունող որոշ քերականներ տալիս են «բայի երկսեռություն» սխալ անունը:

առաջին անգամ նկարագրել է Ստ. Մալխասյանը իր «Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ» հոդվածում, հետագայում այդ երևույթը համոզիչ կերպով հիմնավորել է պրոֆ. Գ. Սեակը իր աշխատություններում: Սակայն այժմ էլ որոշ լեզվաբաններ առարկայի հայցականի տրականաձև առումը (անձի առում) երբեմն համարում են տրական հոլով: Այսպես, օրինակ, լեզվաբան Ա. Արրահամյանը «Ժամանակակից հայերենի բայական կրկնառեություն հարցի շուրջը»¹² իր հոդվածում տրական է համարում առարկայի հայցական հոլովի հետևյալ դեպքերը (էջ 84)՝ «Հսկել եմ... գործերին», «Կարոտում էի... ծուխին», «Ունկնդրում էինք... երգին», «...կոլտեստությունների ենթապատկերում», «...ողջունենք նոր տարուն»¹³ և այլն: Իրականում այս բոլոր խընդիրները հայցական հոլով ունեն: Դա իմացվում է նրանից, որ յուրաքանչյուր դեպքում միևնույն տրականաձև խնդիրը կարելի է փոխարինել ուղղականաձև խնդրով, այսպես «Հսկել եմ մի գործ», «Կարոտում էի մեր ծուխը», «Մի երգ էի ունկնդրում», «Ապասարկում էինք մի քանի կոլտեստություն», «Ողջունենք նոր տարին» և այլն: Ընդհանրապես առարկայի հայցականի կարևոր տարբերիչ կողմն այն է, որ նրա երկու ձևերից մեկը հնարավոր է փոխարինել մյուսով: Քանի որ անցողական բայերի միակ տարբերիչ հատկանիշը առարկայի հայցական առնելն է, ուստի ամեն կասկածելի դեպքում անհրաժեշտ է փորձել. թե բայը ընդունա՞լ է միևնույն բնույթի խնդիրը առնել երկակի ձևավորմամբ:

Ճիշտ է, հայերենում մի շարք անցողական բայեր առնում են միայն ուղղականաձև հայցական, դրանք գլխավորապես այն բայերն են, որոնց արտահայտած գործողությունը անպայման ենթադրում է իր առարկա (անձի առում չունեցող), ինչպես՝ լցնել, քափել, տաշել, զրել և այլն: Սակայն ուղղականաձև հայցականը երբեք ուղղականի (ենթակայի) հետ շփոթվել չի կարող: Սովորաբար շփոթվում է տրականաձև հայցականը տրական հոլովի հետ (երկու դեպքում էլ խնդիր): Հայերենում որպես օրենք տրականաձև հայցականով զբաղված խնդիրների բոլոր դեպքեր փոխարինվում են ուղղականաձև հայցականով: Նույնիսկ այնպիսի բայեր, որոնք մեծ մասամբ ենթադրում են անձի առնում առարկա (ինչպես՝ հրավիրել, ողջունել, դաստիարակել, հաղթել, անհաղթել, դիմավորել և այլն) դարձյալ տրականաձև խնդրի հայցականին զուգահեռ վերցնում են ուղղականաձև հայցական (հրավիրել բժշկին — հրավիրել բժիշկ, դիմավորել գերասանին, դիմավորել մի գերասան, հարգել մարդուն, մի մարդ հարգել և այլն): Իրեն որևէ բայի ստականաձև խնդիրը հնարավոր չէ փոխարինել նույն բնույթի ուղղականաձև խնդրով կնշանակի հոլովը տրական է: Օրինակ, «Զեմ հավատում ցիլերին ձեր ցնծագին» (S) կապակցության մեջ ցիլերին տրական հոլովով է դրված, քանի որ այն որևէ կերպ ուղղականաձև զուգահեռով փոխարինվել չի կարող, իսկ «Գաղտնի մի թույն կեղևում է իմ հոգին» (S), կապակցությունում հոգին հայցական է, քանի որ կարելի է ասել. «Գաղտնի մի թույն հոգի է կեղևում»:

4. Հայերենում բայի սեռը առարկայի հայցական առնող (անցողական) բայերի առանձնահատկությունն է: Այդ բայերի մեծագույն մասը ընդունակ

¹² ՀՍՍՌ Գիտությունների ակադ. «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1958, № 5:

¹³ Հոդվածում բայերի հոլովառության այս դեպքերը համարվում են չեզոք, որ նշանակում է, թե դրանց խնդիրները տրական հոլով ունեն:

է վ մասնիկ առնելու, իսկ հայերենում բայի սեռի Բերականական կարգը ամբողջությամբ առնչվում է վ մասնիկի որոշակի դերի հետ: Այդ դերը հետևյալն է. բայերն ստանալով վ մասնիկ կապակցության մեջ շարունակում են արտահայտել իրենց սկզբնական իմաստը, բայց ունենում են այնպիսի Բերականական ենթակա, որը գործողություն կատարողը չէ, ինչպես. «Քանի ձեռքից հո՛վալով» (Թ), «Մեծ Հայների հայրենիքից երգի ոգին վտարվեց» (Զ), «Օրերս սյարտիայի շրջկոմի բյուրոյում լսվեց անվանի կթվորուհու զեկուցումը» (ՄՀ, 21.5.58), «Տաղանդավոր ու աշխատասեր վրաց ժողովրդի ձեռքով ստեղծվել է քի նոր Բաղա՛» (Եր, 22. 10. 58), «Շատ կոլտնտեսությունների վարչություններ Բնադատվեցին ռեսպուբլիկական մամուլում» (ՄՀ, 15.11.57), «Գյուղական վայրերում բնակվող գրագրաբանավարներին տեղական գործկոմների կողմից պետք է տրամադրվի բնակարան (թարգմ.), «Տասնյակ անգն մարդիկ սպանվեցին ֆրանսիական զնդացիներից» (ՄՀ, 16.10.58): Այս բոլոր դեպքերում էս, ոգին, զեկուցումը, Բաղա՛, վարչություններ, բնակարան, մարդիկ ենթակաները իրենց բայ-ստորոգյալների արտահայտած գործողությունը կատարողը չեն: Գործողություն կատարողը ուրիշ է, որը կարող է կամ նշվել շարահյուսական խնդրի ձևով (բացահայտանով կամ գործիականով անող խնդիր) կամ ենթադրվել: Բերված բայերը չանող ենթակա ունենալու հատկություն են ձեռք բերել վ մասնիկ ստանալու շնորհիվ: Կարևորն այստեղ այն է, որ գործ ունենք զուտ Բերականական երևույթի հետ, այսինքն՝ վառել, վտարել, լսել, ստեղծել, Բնադատել, սպանել բայերը (բառերը) ստանալով վ մասնիկ և կապակցության մեջ չանող ենթակա ունենալով մնացել են նույն այդ բառերը, շարունակում են արտահայտել վառելու, վտարելու, ստեղծելու, լսելու, քնննդատելու, սպանելու իմաստ:

Այդպիսով, առարկայի հայցական առնող (անցողական) բայերը կապակցությունների մեջ միևնույն իմաստն արտահայտելով կարող են ունենալ և՛ անող ենթակա, և՛ չանող ենթակա (երկրորդ դեպքում ունենում են վ): Անցողական բայերի Բերականական այս երկու ձևերը իրենց երկու նշանակություններով բայի երկու սեռերն են ժամանակակից հայերենում: Սա է հայերենում բայի սեռի որպես զուտ փրականական կարգի ըմբռնման միակ ամուր հիմունքը:

5. Անցողական բայի այն վիճակը, որը չունի վ մասնիկ և կապակցություններում ունենում է անող, գործող ենթակա, 1-ին սեռն է, որը ճիշտ կլինի անվանել գործող սեռ, իսկ եթե հրաժարվելու չլինենք ավանդական անունից՝ ներգործական սեռ: Անցողական բայի մյուս վիճակը, երբ այն ստանալով վ ձևարանական մասնիկը կապակցության մեջ ունենում է չանող ենթակա, 2-րդ սեռն է, որը ճիշտ կլինի անվանել չգործող սեռ, իսկ եթե հրաժարվելու չլինենք ավանդական անունից՝ կրավորական սեռ:

Երկու սեռերն էլ ունեն իրենց ձևը. երկրորդինը վ մասնիկի առկայությունն է՝ վտարվել, գրվել, լսվել, իսկ առաջինինը այդ մասնիկի բացակայությունը՝ վտարել, գրել, լսել: Այսինքն վ մասնիկ չստացած անցողական բայը որպես ներգործական սեռի անմասնիկ ձև ըմբռնվում է ի հակադրություն այդ միևնույն բայի (միևնույն իմաստ) վ մասնիկ ստացած ձևի: Ուստի որևէ բայի ներգործական սեռի մասին խոսք կարող է լինել միայն այն դեպքում, երբ այդ բայը ի վիճակի է ստանալ վ մասնիկ և դրա շնորհիվ ունենալ չանող ենթակա: Բայի սեռն ունի ձևարանական (վ մասնիկ) և շարահյուսական՝ (չա-

նող ենթակա) հատկանիշներ: Լեզուողական բայը ներգործական (գործողական) սեռի է միայն այն դեպքում, երբ կապակցության մեջ ունի անող ենթակա և ստանալով վ մասնիկ կարող է ունենալ շանող ենթակա:

Այստեղից հետևում է, որ բայի սեռի քերականական կարգից դուրս են այն բայերը, որոնք ի վիճակի չեն վ մասնիկ վերցնելու ունենալ շանող ենթակա: Դրանք են ա) գրեթե բոլոր անանցողական բայերը (չնչին բացառությամբ ազդել, ներգործել և այլն), բ) այն մի քանի անցողական բայերը, որոնք ընդունակ չեն վ մասնիկ վերցնելու (փնտրել, ամստալ, կարոտել, ցանկանալ, փափագել, վաստակել, շնջալ, հարցնել, լացացնել, վախեցնել և այլն), գ) այն անցողական բայերը, որոնք թեև վ մասնիկ վերցնում են, բայց դրա շնորհիվ շանող ենթակա չեն ունենում (տատանել, խոնարհել, ուտել, հագնել, սահել և այլն): Բայի սեռի կարգը չի կարելի շփոթել, մանավանդ նույնացնել, խնդրառության, հոլովառության հետ, ինչպես երբեմն անում են¹⁴, եթե բայերի խնդրառության, հոլովառության տակ հասկացվում է միայն գործողության և առարկայի քերականական տարբեր հարաբերություններ և դրանց ձևափոքումները, ապա բայի սեռի տակ պետք է միայն հասկանալ գործողության և անհատի քերականական տարբեր հարաբերություններ և դրանց ձևափոքումները:

7. Մ. Արեղյանի բայի սեռի բառային տեսությունը, որն այժմ էլ ընդունվում է լեզվաբանների կողմից հետևյալն է. «Գրաբարում ներգործական և կրավորական ուրեմն ոչ թե բայերի տարբեր տեսակներն են, այլ միևնույն անցողական բայերի (որոնց մեջ մտնում են և պատճառական բայերը) տարբեր գործածության ձևեր, ինչպես որ է շատ լեզուների՝ ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի մեջ: Աշխարհագրորում սակայն կրավորականի համար առանձին բայեր են կաղմվել կրավորականի հատուկ վ ածանցով և ինչպես կարգալ բայի դիմաց պատճառականը կարգացնել դուռ բայ է, նույնպես և կրավորականը՝ կարգացվել մի առանձին բայ է»։ Այս տեսակետը ոչ մի կերպ չի հիմնավորվում: Ըստ Մ. Արեղյանի դուրս է գալիս, որ «ուսանողը նամակը կարդաց» և «նամակը կարդացվեց ուսանողի կողմից» գեպքերում կարդաց և կարդացվեց տարբեր բայեր (բառեր) են, կամ «ուսանողը նամակ է գրում» և «նամակը գրվում է ուսանողի կողմից» գրում մի բայ է, իսկ գրվում՝ մի այլ: Մինչդեռ այդպիսի պնդում անելու ոչ մի հիմք չկա: Ինչպես ճիշտ չի լինի ասել, թե կարդաց և կարգալ կամ գրում և գրել, յուրաքանչյուր գեպքում երկու տարբեր բայեր են, այնպես էլ ճիշտ չէ ասել, թե կարդաց և կարգացվեց կամ գրում և գրվում տարբեր բայեր են: Այսպիսի գեպքերում վ մասնիկը բառակազմական ոչ մի դեր չի կատարում (սխալ է նրան այստեղ ածանց անվանել), ինչպես որ այդպիսի դեր չեն կատարում ում և ց մասնիկները կարդաց և գրում ձևերի մեջ կամ ից մասնիկը սեղանից ձևում: Բայի սեռի մեջ վ-ն դուռ ձևաբանական մասնիկ է: Որեք բայի կրավորական և ներգործական սեռերի ձևերը իմաստով միշտ նույնն են, հակառակ դեպքում բայի սեռի կարգի մասին խոսք չի կարող: Կարդաց և կարգացվեց ցույց են տալիս միևնույն կարգալու գործողությունը, գրում և գրվում ցույց են տալիս միևնույն գրելու գործողությունը: Հետևաբար հայերենում կրավորական սեռի առանձին բա-

¹⁴ «Բայի խնդրառական հատկությունը կոչվում է սեռ», — գրում է պրոֆ. Ռ. Արեղյանը իր «Հայոց լեզվի դասագրքում», 1950, էջ 251:

¹⁵ Ճիշտ չէ ասել, թե բայերի կրավորական սեռի ձևերն առանձին բայեր /բառեր/

յերի (բառերի) մասին խոսք լինել չի կարող և բայերի կրավորական սեռի ձևերը բառարաններում չպետք է տրվեն և չեն էլ տրվում:

Ընչ վերաբերում է Մ. Աբեղյանի հիշատակած լեզուների և արդի հայերենի բայի սեռի համեմատությանը, առաջ փաստերն ասում են, որ ինչպես այդ լեզուներում, այնպես էլ արդի հայերենում բայի սեռը ոչ թե բառագիտական, այլ քերականական կարգ է, տարբեր են միայն նրանց ձևավորումները՝ կապված յուրաքանչյուր լեզվի առանձնահատկությունների, լեզվական ատաղձի հետ: Այսպես՝ գրարարում ներգործականից կրավորական սեռի ձևը հիմնականում կազմվում է բայերի ի լծորդությունը (դրեմ>գրիմ) և նրա խոնարհման համապատասխան ձևերին անցնելու միջոցով՝ Խուլք գրի յուսանողէ, գերմաներենում կրավորական սեռի ձևը կազմվում է werden օժանդակ բայի և իմաստային անցողական բայի 2-րդ դերբայի միջոցով՝ Der Brief wird vom Studenten geschrieben, ֆրանսերեն՝ etre օժ. բայ+իմաստային բայի անցյալ դերբայը՝ La lettre est écrite par l'étudiant, ռուսերենում՝ բային ԵЯ մասնիկը ավելացնելու միջոցով՝ Письмо пишется студентом¹⁶, արդի հայերենում բային վ մասնիկ ավելացնելու միջոցով՝ նաակը գրվում է ուսանողի կողմից: Ձևավորման տեսակետից, թերևս, իրար ավելի մոտ են մի կողմից ֆրանսերենի ու գերմաներենի բայի սեռերը (բաղադրյալ), մյուս կողմից՝ գրարարի, ռուսերենի և արդի հայերենին (միայն բայի ձևափոխություն): Բսկ կարևորն այն է, որ բոլոր հինգ ձևերի նշանակությունը նույնն է՝ բայերը պահպանելով նախնական իմաստը (գրել) ցույց են տալիս, որ գործողություն կատարողը ենթական չէ: Ուստի արդի հայերենում էլ, ինչպես և հիշյալ լեզուներում, ներգործական և կրավորական միևնույն անցողական բայերի տարբեր գործածության ձևերն են:

8. Հայերենում կարևոր է տարբերել վ մասնիկի կրավորական սեռ կազմելու դերը նրա բոլոր մյուս դերերից: Փաստերը ցույց են տալիս, որ այդ մասնիկի կրավորական սեռ կազմելու դերը շատ ավելի փոքր է, քան նրա մյուս դերերը: Մասնավորապես մեծ է վ-ի (այստեղ ածանց) բառակազմական դերը:

Բազմաթիվ բայերում վ-ն ղուտ բառակազմիչ սոսկածանցի դեր ունի, ինչպես՝ հրաժարվել, հաշտվել, գանգատվել, հնազանդվել, բնակվել, հաջողվել, վիճակվել, սրափվել, համաճակվել, գգվել, մոլուկվել, սխալվել, զբաղվել, լավնվել և այլն, գրեթե այս բոլոր բայերի վ շունեցող ձևերը այժմ մահացած են: Որոշ դեպքերում վ-ն (այստեղ ևս ածանց) ընդգծված գոյականակերտ արժեք ունի, ինչպես՝ հողված, հաւված, դիպված, հավելված, գանգված, դաժնված(է), գրված, պատմված, շինված, կազմված, կառուցված, կերտված, Բաղված և տարբեր ժամանակներում կազմված շատ ուրիշ բառերի մեջ: Վ-ն ներկայումս էլ ունի բառակազմական գործուն դեր: Բազմաթիվ անցողական

և նրանով, որ իրր ունեն գերբայական ու եղանակային բոլոր ձևերը: Իրականում ոչ թե բայերի կրավորական սեռը ունի գերբայական և եղանակային բոլոր ձևերը, այլ բայի ներգործական սեռի գերբայական կամ եղանակային յուրաքանչյուր ձև ունի կարող է ունենալ իր հակադիր կրավորական սեռի ձևը: Այսինքն, օրինակ, զրվում ոչ թե զրվել բայի անկաատար գերբայի կրավորական սեռի ձևը կամ կառուցվել ոչ թե կառուցվել բայի անցյալ կատարյալն է, այլ կարվալ բայի անցյալ կատարյալի կրավորական սեռի ձևը:

¹⁶ Ռուսերենում կրավորական սեռի գերբայական ձևերը երկրորդական դեր ունեն:

բայեր ստանալով այդ վ-ն (այստեղ ևս ածանց) փոխում են իրենց իմաստը կամ նոր երանգ են ստանում՝ միաժամանակ դառնալով անանցողական բայեր, ինչպես «Տխուր հանգերից ամենքը տրտում փաշվում են կամաց իրենց տունն ու բուն» (Թ), «Արահետն օձապտույտ ոլորվում էր» (Բ), «Հայտնվիր սև լանապատում» (Տ), «Հաղթ շենքերի պատերը հաղթ ուրշվում են հետզհետե», «Ուլի ները ձգվում են ամենուրեք» (Զ), «Ալիշալուն և Ծովինարը գտնվում են Սևանա լճի հարավային ափում» (ԳԹ, 21.5.58), «Այդ մասին առավել բացահայտորեն արտահայտվում են... թերթերի տեսարանները» (ՍԶ, 21.5.58): Այստեղ գործ ունենք ոչ թե փաշել, ոլորել, հայտնել, ձգել, գտնել, արտահայտել բայերի, այլ դրանցից վ-ի ավելացմամբ նոր իմաստ կամ երանգ ստացած նոր բայերի հետ, որոնք առանձին տրվում են բառարաններում: Հաճախ միևնույն բայի մեջ վ մասնիկը երկակի դեր է կատարում՝ մերթ բային տալիս է կրավորական սեռի նշանակություն, մերթ՝ նոր իմաստ կամ երանգ (առանց սեռի նշանակության): Որինակ՝ մեխը հանվեց և երևա՜ն հանվեց, գիրքը նվիրվեց և հեղինակը նվիրվեց, շապիկը լվացվեց և երևա՜ն լվացվեց, ճաշը պատրաստվեց և վահանը պատրաստվեց, կարծիք հայտնվեց և վահանը հայտնվեց և այլն: Որինակներից առաջինները կրավորական սեռի ձևեր են բայի նախնական իմաստով և շանոդ ենթակայով, իսկ երկրորդները ունեն անոդ ենթակա և նոր իմաստ կամ երանգ են ստացել: «Երեսան հանվեց» դեպքում գործ ունենք նոր բայի հետ, միայն շորեր հանելու նշանակությամբ, մինչդեռ հանել բայը ցույց է տալիս ամեն ինչ հանելու գործողություն, «մեխը հանվեց» դեպքում առկա է միևնույն հանել բայը: Նույնը և՛ «շապիկը լվացվեց» դեպքում միևնույն լվանալ բայն է (որևէ բան լվանալու իմաստով), իսկ «երեսան լվացվեց» արդեն այլ բայ է (միայն ձեռքեր ու երես լվանալու իմաստով): «Կարծիքը հայտնվեց»՝ միևնույն հայտնել բայն է, բայց «վահանը հայտնվեց» նոր բայ է՝ երևան գալու, գտնվելու իմաստով և այլն: Այսպիսի դեպքերում կարևոր դեր է խաղում ենթակայի լինելը, եթե ենթակա դարձած անունը էությունը չանոդ է (իր, անշունչ) հիշյալ բայերը կրավորական սեռի են վերածվում, մինչդեռ էությունը գործող (անձ, շնչավոր) անվան հետ այդ բայերը իմաստափոխվում են: Մյուս կողմից վ մասնիկը ստացած մի շարք այլ բայերի հետ նույն գործող անունները վեր են ածվում շանոդ ենթակայի, իսկ բայերը՝ կրավորական սեռի, ինչպես՝ երեսան ծաղկվեց, վահանը փնտրվեց, անարգվեց և այլն: Այստեղ էլ ըստ երևույթին դեր է խաղում բայերի արտահայտած գործողության յուրահատուկ բնույթը:

9. Արդի հայերենում կրավորական սեռի կիրառության մասին մոտավոր պատկեր կարող են տալ հետևյալ հաշվումները. 1958 թ. մայիսի 21-ի «Սովետական Հայաստան» թերթում գործածված է 1070 բայ (դերբայական և եղանակային ձևեր), որոնցից վ մասնիկ ունեն 262-ը, իսկ սրանցից էլ կրավորական սեռի են 80-ը: Նույն օրվա «Գրական թերթ»-ում գործածված է 1640 բայ, սրանցից վ մասնիկով՝ 273-ը, իսկ սրանցից էլ կրավորական սեռի՝ 48-ը:

10. Արդի հայերենում վ մասնիկը բայերի կրավորական սեռ կազմելու միակ միջոցն է, կա միայն մի երկու անկարևոր բացառություն (ինչպես օրինակ՝ տալ բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերը կրավորական սեռի են վերածվում Բ-ի ավելացման միջոցով՝ տվեց—տրվեց (ինչը), տվել է—տրվել է (ինչը), Վ (ու, ւ) մասնիկի ծագումն անհայտ է, թեև այն առկա է հայերենի ամենահին հուշարձաններում (ինչպես. «Եւ ի նմին ժամու րժշկեաց

զբաղումս ի հիւանդութեանց եւ ի հաւուածոց եւ յայսոց շարաց», «Քանզի ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա» (Ս. դ.) և այլն: Պետք է ենթադրել, որ այս մասնիկը նախապէս կատարել է բառակազմիչ դեր (կամ որևէ այլ, ոչ կրավորական սեռի) և միայն հետագայում (11-րդ դարից) հին խոսակցական հայերենի (նաև բարբառների) քերականական բնորոշ կանոնների մահացման զուգընթաց աստիճանաբար սկսել է ձեռք բերել նաև կրավորական սեռ արտահայտելու լրացուցիչ դեր¹⁷: Այսինքն՝ վ մասնիկը հին է, իսկ կրավորական սեռի նշանակություն տալու նրա դերը՝ անվերջ նորոգելու ենթադրության պատճառներն են. ա) հայերենի հնագույն բնագրերում (գրաբարյան) վ (ու) մասնիկի գործածության դեպքերից ոչ մեկում այն բառին չի տալիս կրավորական սեռի նշանակություն (հիմնականում գոյականակերտ է անվերջակրութեան հետ միասին), բ) բայերի վ մասնիկ ունեցող և կրավորական սեռի նշանակություն ստացած ձևեր սկսում են հանդես գալ միայն միջնադարյան հայերենի աղբյուրներում, ըստ որում մի առ ժամանակ զուգահեռաբար գործածվում են նաև կրավորական սեռ ձևավորելու հին միջոցները (գրաբարյան), գ) ներկայումս էլ հայերեն խոսքում վ մասնիկը ոչ կրավորական նշանակությամբ մի քանի անգամ ավելի շատ է հանդես գալիս, քան որպէս կրավորական սեռի կազմիչ: Օրինակ՝ վերոհիշյալ թերթերի երկու համարներում վ մասնիկ ունեցող 535 բայերից միայն 128-ում է վ-ն կրավորական սեռի կազմիչ:

11. Յն ածանցը միայն բառակազմական է, այսինքն՝ այդ ածանցի միջոցով ամեն դեպքում ստեղծվում է նոր իմաստ, նոր բայ (բառ), ինչպէս բարձրաճառ—բարձրացնել, բնել—բնեցնել, սիրել—սիրեցնել¹⁸ և այլն: Մ. Արեղյանը գրում է, որ ցն-ով կազմված բայերի «ենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ միայն պատճառ է լինում ուրիշին մի բան կատարելու»: Այսպիսի մեկնաբանության նպատակն է ցն ածանցի դերը կապել բայի սեռի քերականական կարգի հետ, մինչդեռ իրականում ցն ածանց ունեցող (և վ մասնիկից զուրկ) բոլոր բայերի ենթական ինքն է կատարում գործողությունը, ինչպէս՝ «Փողի փակը, փողի փակը, բարձրացնում է մարդու հասակը, զեղեկացնում է հրեշ տգեղին»: «Կլրացնում են, արտորում արտուտները արտուտում» (Թ), «Դահճին անգամ դու՛ կդյութեք, կստեղծենք և կայսեր» (Տ): Պարզ է, որ բոլոր այսպիսի դեպքերում գործողությունը կատարում է քերականական ենթական: Վ մասնիկ ստանալով այսպիսի անցողական բայերը մյուսների նման կարող են կրավորական սեռի նշանակություն ստանալ և այս դեպքում իրոք ունենալ ենթակա, որը չի կատարում գործողությունը:

Մ. Արեղյանի «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ վ մասնիկի և ցն ածանցի լեզվաբանական որակը նույնացված է. երկուսն էլ այնտեղ բառակազմիչ են և սեռի նշանակություն տվող: Այս տեսակետը քիչ մշակելով որոշ լեզվաբաններ փորձում են բայի երեք սեռերի ավանդական տեսությանը հայերենի համար նոր երանգ տալ, ավելի ճիշտ քերականական, ձևաբանական

¹⁷ Բոլորովին համոզացուցիչ չէ այն կարծիքը, ըստ որի, հնում, երբ գրաբարը, այսինքն՝ հին հայ գրական լեզուն կենդանի էր խոսակցական, ի տարբերություն նրա՝ հայ բարբառներում կրավորական սեռը կազմվել է վ /ու/-ի միջոցով:

¹⁸ Բավական է իրականում պատկերացնել այս բայերից յուրաքանչյուրի գործողությունը, որպեսզի պարզ դառնա նրանց իմաստային խոր տարբերությունը. բարձրաճառ լիս անհատը մի գործողություն է կատարում, իսկ որևէ բան բարձրացնելիս՝ բոլորովին այլ, երբ մեկը ցնում է դա մի գործողություն է, իսկ երբ ցնեցնում է՝ բոլորովին այլ:

